Նպատակը շատ վսեմ է. և կուզէ ճշմարտութիւն որոնել, ազգին սէրը գրաւել և Գերմանական մանկավարժութիւն ուսանել։— Բայց ինչ կը ցանկայ Գերմանական մանկավարժութիւնը. — կը ցանկայ կրթել զմարդս վասն աստուածատուր որոշման յԱստուծոյ նմին շնորհուած ընդունակութիւններուն յարմար. և կը ցանկայ ոչ միայն Գերմանացիք կրթել, այլ հրէայ, չէ թէ 'ի սպաս այս ինչ և այն ինչ դասերու, այլ 'ի սպաս շահուց համբրէն մարդկութեան ծառայել։ Նա բան չունի ոչ նիւթապաշտներու (մատերիալիստ) և ոչ նիհիլիստներու հետ. Նորա հիմքը՝ կրօն է, և կատարը— մարդուս յաւիտենական, երկնային կոչումը։

Հայ ընթերցողներուս պէտք է ասել, որ երկար ժամանակէ 'ի վեր Գերմանացի մանկավարժներն ու հոգեւորականները ուժգին կը վիճարանեն, թէ արդեօք հարկ է վարժարանը եկեղեցիէն բաժնել, թէ ոչ. և շատերը կասեն՝ այո՛ հարկ է։ Սակայն այդ կտորիս մէջ Եւրոպացիք մեզ բնաւ օրինակ չեն. մեր կենսական պայմանները ամենեին ուրիշ են, առանց եկեղեցւոյ մէջ վարժարան չունինք, և նոցա բաժանման վրայ խօսիլը մեզ համար աւելորդ, զուցէ և վտանգաւոր բան է։ Այդ մասին ուրիշ անգամ. այժմ դառնանք Պ. Զայֆարթին, որ դաւանական հարցի և վարժարանի ու եկեղեցւոյ բաժանման վրայ երկար վիճել չի ցանկար, ըստ որում նորա կարծիքով այդ արդէն վճռուած խնդիրներ են։

Պրուսիոյ մասին Պ. Զայֆարթը կասէ, թէ Ֆրիտրիկոս մեծէն սկսեալ Պրուսացւոց թագաւորներն ու նշանաւոր մարդիկը ազգային լուսաւորութեան և Գերմանական մանկավարժութեան վրայ միշտ խնամք ունեցան, և Պեստալոցցու մտքերը փայփայելով՝ հաստատուն հիմք տուին ազգային դպրոցին։ Հատ երիտասարդներ Զուիցերիայ ուղարկուեցան, որ նոքա բան ուսանին այդ մեծ մանկավարժէն, ու Ֆրիտրէի, Ալէքսանդր Հումբոլթի, Շլայերմախերի, Շտայնի, Սիւվերի պէս երևելի անձինք և ազգասէր գիտնականք ու մանաւանդ Լուիզէ թագուհին, թէ բանիւ ու թէ գործով նորանոր գաղափարներու իրագործութեանը ձեռնտու եղան. Այդ թագուհին այն աստիճանի ոգեւորուած էր Պեստալոցցու համար, որ ասաց միանգամ "Ա՜հ, եթէ ես կրնայի Զուիցերիայ գնալ ու սրտիս երախտիքը արտասուօք այդ մարդուն յայտնել, նորա աչքը սնդմել։ Ես շնորհակալ եմ նորամէն յանուն մարդկութեան"։

Քսան երեսուն տարի առաջ Պրուսացոց կառավարութիւնն ու պետական երևելի անձինքը իրաւ շատ արդիւնաբերատար հանդիսացան մանկավարժական ասպարիզի վրայ, և պարոն առենախօսը լիովին իրաւունք ունէր գովեստ կարդալու նոցա վսեմ ազգասիրական արարքներուն. բայց քառասներորդ թուականներէն սկսեալ մինչև վերջերորդը՝ Պրուսացւոց կառավարութեան աստիճանայ յառաջադէմ, ազատ ընթացքը յանկարծ կանգ առաւ, և ազգային վարժարանը այդ միջոցին շատ տասապանք քաշեց։ Այդ տրտում ժամանակի վրայ Պ. առենախօսը ամենեին բան չի ասեր, և կ'աւարտէ իր ճառը խրախոյս տալով Պրուսացւոց ազգին, որ մի քանի տարիէ 'ի վեր իր ջանքն ու սէրը դարձնալ վարժարանին ընծայած է։ (Շարունակելի)

ԲԱՐՈՅԱԿԱՆ

ԱՌԱԾՔ

Իմաստուն մի ասաց, որպէս ընթանայ և փութայ ճանապարհորդն 'ի տուն իւր, Իսպէտ և հանդիպի ցանկալի սահմանացն զժուարին անցանց, նոյնպէս պարտ է մարդոյ՝ փութալ յիմաստութիւն և 'ի բարի գործս. զի մահն բնակեալ է 'ի ծոցս մեր նման օձի։ Ընդ-էր-ուգիր Ա՛ԺԻ՛

Ժիժին առ մրջիւն գնաց և ասէ, տուր ինձ կերակուր՝ զի մեռանիմ 'ի սովոյն. և ասէ մրջիւն, թէ՝ ի՞նչ գործ առնէիր որ կերակուր չունիս։ Եւ ասէ ժիժին, թէ՝ 'ի վարսաւոր ծառս և 'ի տերևս նստէի և քաղցրաձայն երգէի, և զճանապարհորդսն զուարճացուցանէի։ Եւ ասէ մրջիւն. յիրաւի մեռանիս 'ի սովուն. զի կերակուր ոչ վաստակեցար քեզ, այլ ձայն վայրապարատեր, ուստի ոչ շահեցար. և ոչ ետ մրջիւն կերակուր. և ժիժին մահէր 'ի սովոյն։ Ընդ. Ա՛Պ Թ։